ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.2. Հարավարևմտյան Ասիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները

• • •

Հարավարևմտյան Ասիան ունի բարենպաստ աշխարհագրական դիրք: Այստեղով են անցնում Եվրոպան, Ասիան և Աֆրիկան միմյանց կապող ցամաքային ու օդային կարևորագույն ուղիները, ինչը կարևոր է տարածաշրջանի երկրների սոցիալ-տնտեսական զարգացման համար: Տարածաշրջանի պետությունները հարուստ են հանքային ու ռեկրեացիոն ռեսուրսներով: Բարենպաստ աշխարհագրական դիրքը, բնական հարուստ ռեսուրսները (հատկապես նավթը և բնական գազը) ստեղծել են անկայուն ռազմաքաղաքական իրավիճակ, նպաստել աշխարհակալ տերությունների աշխարհաքաղաքական շահերի բախմանը: Արդյունքում բավական ընդարձակվել է «տաք, թեժ» կետերի աշխարհագրությունը և Հարավարևմտյան Ասիան մեր օրերում աշխարհի աշխարհաքաղաքական անկայուն տարածաշրջաններից մեկն է: Ցավոք, երբեմն ուժային ճանապարհով (ոչ քաղաքական ու դիվանագիտական) տեղի են ունենում պետությունների սահմանների բռնի վերաձևում և փոփոխություն: 2020թ արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ Ադրբեջանը Թուրքիայի և արաբական ու պակիստանյան վարձկան ահաբեկիչների միացյալ ուժերով զավթեց Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը, իսկ 2023թ էթնիկ զտում իրականացրեց նաև մնացած մասում:

• • •

Հարավարևմտյան Ասիան ունի բազմազան բնական պայմաններ ու հարուստ ռեսուրսներ: Մակերևույթը և կլիմայական պայմաններն իրենց ազդեցությունն են թողել բնակեցման ու գյուղատնտեսության մասնագիտացման վրա: Տարածաշրջանը գտնվում է արևադարձային, մերձարևադարձային (չորային և խոնավ կլիմայով) կլիմայական գոտիներում, իսկ լեռնային շրջաններին բնորոշ է կլիմայի վերընթաց գոտիականությունը: Տիրապետում են

արևադարձային օդային զանգվածները, որոնց ազդեցությամբ ցամաքի ներքին շրջաններում կլիման խիստ չորային է:

• • •

Տարածաշրջանի մյուս օգտակար հանածոներից նշանավոր են քրոմիտների ու բորատի (Թուրքիա), պղնձի ու մոլիբդենի (Հայաստան), մանգանի (Վրաստան), ալյումինի հումքի՝ ալունիտների (Ադրբեջան), ածխի (Վրաստան, Թուրքիա), կալիումական աղերի (Իսրայել-Մեռյալ լիճ), բորակի (Վանա լիճ), բազմազան աղերի (ՈՒրմիա լիճ) պաշարները: Աղի լճերն ունեն նաև բուժիչ նշանակություն, իսկ խոշոր լճերը նաև՝ տրանսպորտային: Բացատրեք:

Հարավարևմտյան Ասիայի բազմազան հողատիպերից լայն տարածում ունեն նախալեռնային շագանակագույն և լեռնային սևահողերը: Ալյուվիալ (գետաբերուկային) բերրի հողեր կան գետերի հովիտներում, իսկ չորային շրջանների հողերը, մելիորացիայի (հողաբարելավնամ) շնորհիվ դարձել են կուլտուր-ոռոգելի: Անտառային զանգվածները տարածված են խոնավ մերձարևադարձերում: Խոնավ մերձարևադարձային շրջաններում զբաղվում են ցիտրուսների, ձիթապտղի, թեյի, դափնու մշակությամբ: Ալպյան փարթամ բուսականությամբ բարձր լեռնային շրջանները ծառայում են որպես արոտավայրեր: Աղքատ բուսականությամբ չորային շրջաններում զարգացել են ուղտաբուծությունը և կոշտաբուրդ ոչխարաբուծությունը:

• • •

Հարավարևմտյան Ասիան պատմամշակութային արժեքների ստեղծման դասական տարածաշրջան է, որոնց կողքին առաջնակարգ լողափերը, հանքային ջրերն ու բուժիչ ցեխերը, անտառային զանգվածներն ու գեղատեսիլ բնությունը այն զբոսաշրջային առումով դարձնում են չափազանց պահանջված:

• • •

Տարածաշրջանի երկրները տարբերվում են նաև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Զարգացման հետինդուստրիալ փուլում է միայն Իսրայելը (մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ավելի քան 52000$), ՀՆԱ-ի ծավալով առաջատար են նաև Արաբական թերակղզու նավթ արդյունահանող երկրները: Տնտեսապես հետամնաց երկրներն են Աֆղանստանը, Եմենը, Հորդանանը:

• • •

Արևմտյան մասի կլիման Միջերկրածովային է (փորձեք հիշել այդ տիպը), ծովափնյա նեղ դաշտավայրերի կլիման խոնավ է՝ մոտ 2500 մմ տեղումներ տարեկան միջին քանակով: Ցամաքի ներքին չորային շրջաններն ինտենսիվ ոռոգվում են, որտեղ տարեկան ստանում են 2 բերք: Ոռոգման համակարգն ունի հազարամյակների պատմություն (Միջագետք):

• • •

Լճերը քիչ են, հիմնականում՝ փոքր, որոնց գոգավորությունները առավելապես ունեն տեկտոնական, տեկտոնահրաբխային, հրաբխային ծագում: Խոշոր լճերը շատ են Հայկական լեռնաշխարհում՝ **Ուրմիա**, **Վանա**, **Սևանա**: